

c) armen.-latein. Isoglossen sind im Wesentlichen *eram* „siede, walle“: lat. *erro* (B 123), *lam* „weine“ (B 126): lat. *lā-mentum*, *serem* „lasse wachsen“, *serim* „wachse“: lat. *creo, cresco* (B 142).

d) armen.-kelt. ist höchstens die Gleichheit der Praesensstammerweiterung von *harkanem* „schlage“: air. *orgaim* (B 132); vielleicht ist aber hier das Hethitische und Tocharische anzureihen.

e) arm.-germ. Beziehungen lassen sich feststellen bei *azazem* „trockne“: got. *azgo* (B 115), *cučanem* „zeige“: ahd. *scouwōn* (B 144), wo nur Armen. und Germ. ein bedeutungsgleiches Verbum zeigen.

f) Gruppenübereinstimmungen: Arisch-Italisch: *aucanem* „salbe“ (B 118).

Arisch-Griechisch: *joyl* „gegossen“ (B 134), mit Zwischengliedern im Phryg. und Thrak. So müssen wohl die meisten arisch-griech. Isoglossen in der Phantasie ausgebaut werden.

Iranisch-Slavisch ist die Beziehung von *usanim* „lerne, gewöhne mich“ (B 141), Iranisch-Baltisch dagegen die von *jaunem* „weihe“ (B 135). Interessant ist auch das Zusammengehen von *erdnum* „schwöre“ mit osset. *ard* und ksl. *rota* „Eid“ (B 123 b).

Griech.-Ital. ist die Beziehung zu *loganam* „bade mich“ (B 128), mit Substantiven im Kelt. und Germanischen.

Alban.-Griech. sind die Verwandten von *lap'em* „leck“ (B 127).

Kelt.-Slav. Wörter vergleichen sich mit *dinčim* „horne, tute“ (B 121).

g) größere Gruppen umfassen die Wörter *malt'em* „beten“: Heth. Balt. Slav. (B 136) und *aganim* „ziehe mir an“: Iran. Ital. Balt. Slav. (B 114).

h) Einen Fall von Isoliertheit bietet das Wort *zgest, zgestu* „Kleid“ mit seinem vereinzelt *tu*-Stamm: B 124. Es verhält sich also *zgest*: lat. *vestis* = *mah* (B 60): lat. *mors*. Das Armenische muß demnach eine besondere Vorliebe für *tu*-Stämme besessen haben.

Isoliert ist auch das Wort *unim* „habe“ durch seinen Vokalismus (B 139), findet aber an *utem* „esse“ (oben A 78) eine Parallele.

ՊԵՏԱԿԱՆ ԳԼՈՍՍԱՐԻ ՆԱԽԱԳԻՐԻ ՆԱԽԱԳԻՐԻ

(Շարունակություն)

ԳՈՒՄԳԱՓՈՒ

1. ԳՈՒՄԱՆ ԳԱՍ (1719)

Պոլսոյ Գումգափու թաղի ամենահին ընկերական կազմակերպութիւնն եղած է Դպրաց Դաս Մայր-Եկեղեցւոյ անունով, որ հաստատուած է 1719ին, ունենալով դպրապետ՝ Տիրացու Յովսէփի (Երեսուն Զէլէպի)՝ «Սահաբնը Պաշը»¹:

Պեգմեան Ամիրայ այս Ընկերութեան ըրած է կտակ մը, որուն հասցիքով կը վճարուէր երաժիշտ ուսուցչին թոշակը: Դպրաց Դասը ունէր իրեն յատուկ վազըփ եւ կալուած, ինչպէս նաեւ «Ուսումնարան» կոչուած մասնաւոր հաւաքածոյ մը Մայր-Եկեղեցւոյ չորսփակին մէջ²:

1922ին 203ամեակի հանդիսական Պատարագով տօնուած է³:

2. ՏՆԱՆԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ (1832)

«Աղքատատէր» եւ «Աղքատախնամ» անունով կոչուած Ընկերութիւններու սկզբնական ծագումը 1832էն է, երբ հիմնուած է «Տնանկաց (աղքատաց) Մատակարարութեան» Ընկերութիւնը կամ վարչութիւնը, որ նպատակ ունէր «օգնութեան հասնիլ մանաւանդ այն տառապելոյց, որք անկարող են աշխատիլ, բայց միանգամայն կ'ամչան մտրալ հասարակ աղքատներու պէս»⁴:

Ընկերութեան հիմնադիրը կը համարուի Պեգմեան Ամիրան, որ 1832ին Գումգափուի Պատրիարքարանի մէջ Ազգին երեսներէն 36 հոգիէ բաղկացած ժողով մը կազմելով՝ վեց կարգի կը բաժնէ զանոնք, որպէս զի փոխնիփոխ վեցվեց հոգի աղքատներու կարիքները հոգան: Մայր-Եկեղեցւոյ սենեակներէն մին այս նպատակին կը յատկացուի, ուր կը մնար «Տնանկաց Սնտուկը»: Ընկերութիւնը ոչ միայն չբաւարարուէր ու հազնելիք կը հոգար, այլ եւ աղ-

¹ Պետրոս Կարապետեան, Հնդադարեան Յիշատակարան Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ, Կ. Պ. 1935, էջ 302:

² Ա. Ալլոյոյանեան, Գաղութ. Տարեգր., Ա., էջ 52:

³ Ժողովուրդի Ձայնը, Կ. Պ. 1922, թ. 1993:

⁴ Բիւզանդ. Բէշեան, Պատմութիւն Ս. Փ. Հիւանդանոցի, էջ 37:

բառ սրբիկէտ աղջիկներու հարսանեկան ծախքը կը ստանձնէր, կարօտ քաղելու դպրոցներուն կը նպաստէր եւ երբեմն Պատրիարքարանի կարեւոր ծախքերը իր վրայ կ'առնէր:

Տնանկաց Մատակարարութիւնը⁵ տեւած է մինչեւ 60ական թուականները, երբ արդէն կը «կոխն նոյն նպատակով զանազան Ընկերութիւններ երեսան գալ»:

3. ԼՈՒՍԱԽՈՐԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1844)

Գումգափուի Լուսաւորչեան Ընկերութիւնը հիմնուած է Մատթէոս Պատրիարքէն, 1844 Յուլիս-Օգոստոսին: Արշալոյս Արարատեան⁶ 1844 Սեպտ. 2ին Ընկերութեան հիմնուելը ծանուցանելէ վերջ՝ կը ճշդէ որ «Լուսաւորչեան Ընկերութեան» յանձնուած է Գումգափուի եւ Եփեսոսի մէջտեղ եղած «Լուսաւորչեան» վարժարանի վարչութիւնը⁷, ո'չ թէ «Մայր-վարժարանի», ինչպէս սխալմամբ կը գրեն Հրանդ Ասատուր⁸ եւ Ա. Ալլոյոյանեան⁹:

4. ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1852)

Ընթերցասիրաց Ընկերութիւնը հիմնուած է 1852 Յունուարին: 1852 Օգոստոս 26ին Յայտարարութիւն մը հրատարակելով՝ հիմնադիրները կը գրեն. «Արդարեւ բարեկարգ Ընկերութեանց յաջող բերած օգուտները անթիւ են եւ չի գտնուիր այնպիսի ամենադժուար գործ մը, որ փոքրիկ Ընկերութեան մը առաջը չի գլուրանայ: Ըսածնուս ճշմարտութեանը ապացոյց են ազգերնուս առաջը ներկայ գտնուող թէ՛ օտար ազգաց եւ թէ՛ ազգային Ընկերութիւնները: Ասիկա աղէկ գիտնալով... սիրով եւ միաբանութեամբ ձեռք ձեռքի տուած ուր ամիս առաջ «Ընթերցասիրաց» անուն Ընկերութիւն մը կազմեցինք, որ մեր պարագայ ժամանակները ապարդիւն եւ ընդգայր չմտնէր. ուստի բարոյական դադարներու ծառայելու եւ ազգասիրութեան արդիւնքը ճանչնալու նպատակաւ ընտրած եմք բոլոր հայ լրագրիւնները: Ասիկէ զատ թէ որ ազգասէր աղաները նպատամատոյց ըլլան՝ թէ՛ գրքերով եւ թէ՛ զրատամատոյց ըլլան՝ թէ՛ գրքերով եւ թէ՛ զրատամատոյց ըլլան՝ թէ՛ գրքերով վերածանու-

թեան սենեակ մը կազմելու, օտարազգի լրագրիւններ ստանալու եւ թէ որ ձեռքերնուս ալ գայ, բանասիրական տետրակներ, գրքեր, թարգմանութիւններ, ազգիս դաստիարակութեանը եւ բարոյական կրթութեանը նպաստող գրուածքներ տպելով՝ ազգին կողմէ եղած ձեռնտուութեանց փոխարէնը հատուցանել Աստուծով: Հիմնադրուած է 1852 թ. 36 թիւին գրուած: Ահա Ընկերութեան պայմանները. 1. Մէկ բաժինը՝ ամիսը 6 դրուէ է. 2. Այս ստակը ամիսէն քանի մը օր առաջ պիտի վճարուի՝ Ընկերութեան պէտքերը հոգացուելու համար. 3. Ընկերութեան անդամ ըլլողը կը պարտաւորի Ընկերութեան Կանոնները անպակաս ընդունելու: Ով որ կ'ուզէ այս Ընկերութեան գրուել, առ այժմ Խումբարու Բազումճի խանը Ընկերութեան գրասենեակը կրնայ ստորագրուել¹⁰:

1853 Յունուար 1էն սկսած Ընկերութիւնը կը կոչուի «Ընթերցասիրաց Թանգարան» եւ կ'ունենայ 82 Յօդուածէ բաղկացած Կանոնադրութիւն մը¹¹: Ընկերութեան անդամ կրնան գրուիլ «կրօնով Լուսաւորչական եւ վարժով համեստ» անձեր (Յօդ. 11): Կրնելու ալ կրնան անդամագրուիլ, բայց «անոնք ո'չ քանգարան (Ընթերցարան) կրնան գալ եւ ոչ ալ պաշտօնէից կարգը անցնիլ» (Յօդ. 14): Ընկերութեան Տնօրէն Ժողովը 30 հոգիէ կազմուած է (Յօդ. 23):

1853ին Ընկերութեան Ընթերցարանը Մայր-Եկեղեցւոյ Ուսումնարանի սրահներէն մէկուն մէջ կը փոխադրուի¹²:

Մասիս¹³ տուած է Ընկերութեան պաշտպաններուն ու Տնօրէն Ժողովի անդամներուն ցանկը, որմէ կը տեսնուի թէ ժամանակի աշխատող անձեր անդամ ըլլալով՝ Ընկերութիւն մեծ կարեւորութիւն ստացած է:

1853 Հոկտ.ին Ընկերութեան Ընթերցարանը այցելելով՝ Յակոբոս Սերոբեան Պատրիարք՝ իւր պաշտպանութիւնն ու նպատուրը կը շնորհէ Ընկերութեան¹⁴:

1859ին «Իւր նպատակն աւելի զիւրութեամբ հասնելու համար»՝ Ընկերութիւնը կ'որոշէ իր Մատենադարանը Ազգին նուրբել¹⁵:

¹⁰ Մասիս, 1852, թ. 31 եւ 32:

¹¹ Տե՛ս Մասիս, 1853, թ. 62:

¹² Մասիս, 1853, թ. 67:

¹³ Անդ, թ. 84:

¹⁴ Անդ, թ. 91:

¹⁵ Մեղու, Կ. Պ. 1859, էջ 103: — Մասիս, 1859, թ. 380:

⁵ Տե՛ս այս մասին Բիւզ. Բէշեան, Պատմ. Ս. Փ. Հիւ., անդ, էջ 37—45:

⁶ 1844, թ. 206:

⁷ Անդ, թ. 224:

⁸ Ընդարձակ Օրացոյց, 1901, էջ 231:

⁹ Գաղ. Տարեգր., Ա., էջ 54:

Մասին Փոքր¹⁶ 1869 Օգոստ. 1ին գու-
ժելով մահը Բժիշկ Համբարձում Ալքու-
նեանի՝ կ'ըսէ որ Գումգափուի Ընկերացու-
րաց Թանգարանի հիմնադիրն եղած է:

Ընկերութեան գլխաւոր Մեկենասն եղած
է Նիկողոս Պալեան¹⁷:

5. ՕԺԱՆԿԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1852)

1852 Մարտ-Ապրիլին Գումգափուի Մայր-
եկեղեցւոյ Ուսումնարանի եւ շրջակայ երեք
գաղութներու վարչութիւնը քանի մը ուսում-
նասէր անձերու յանձնուած էր: Ուսումնա-
րանի եկամուտը հարկ եղած ծախքը չկարե-
նալով գոցել՝ յիշեալ անձերը կը խորհին Ըն-
կերութիւն մը կազմելով՝ Ժողովուրդի կա-
մաւոր նպատակն զիմել: Գերագոյն ժողովի
քոյլտուութեամբ կը հիմնեն «Օժանդակ Ըն-
կերութիւն»ը, որուն նպատակն էր. «Մայր-
եկեղեցւոյ Ուսումնարանի պայծառութեան
պէտք եղած ծախքը հոգալ¹⁸»:

6. ԵՂԱՅՐԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1857)

Թովմա Թ. Յարութիւնեան, անդամ
«Եղայրասիրական Ընկերութեան», 1857 Յու-
նուար 14ին ծանուցում մը կը հրատարակէ
Մասիսի մէջ, որ թէ՛ ծագումը եւ թէ՛ բնոյթը
կը լուսարանէ Ընկերութեան: Մասիս¹⁹ կը
գրէ. «Գումգափուի կողմերը Բապուճճի
խանը, երկրորդ դստիկոնը, նոր Ընկերու-
թիւն մըն ալ հաստատուեցաւ Եղայրասիրա-
կան անուամբ, ուր Յունուար 21էն սկսեալ
Հայերէն, Գաղղիերէն եւ Անգլիերէն լեզուաց
ու աշխարհագրական եւ բուսաբանական ուս-
մանց դասատուութիւն պիտի ըլլայ փափա-
քող անձինքներուն»:

Ինչպէս յայտնի կ'ըլլայ՝ Ընկերութեան
նպատակը նման է Ղալաթիոյ «Անձնուէր»ի
նպատակին, այսինքն՝ «անուս չափահասնե-
րուն համար ճրի դասախօսութիւն հաստա-
տել²⁰»: Տարբերութիւնը այն է որ Ղալա-
թիոյ «Անձնուէր»ի դասախօսութիւնները՝
յատկապէս Պոլիս գտնուող գաղաւթի չա-
փահասներուն համար էին:

7. ԵՐԵՎԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1858—1859?)

Բարգէն Ծ. Վ. Կիւլէսէրեան²¹ խօսելով

¹⁶ 1869, Թ. 400:

¹⁷ Գաղ. Տարեգր., Ա., էջ 59:

¹⁸ Նոյեմբ Աղանի, Կ. Պ. 1852, Թ. 13:

¹⁹ Թ. 261: — Հմմտ. Արշ. Արարտեան, 1857,

Թ. 538:

²⁰ Թ. Աղաւան, Հարիւրամեայ Յորեկան Պեղ-

ճեան Մայր Վարժարանի, Կ. Պ. 1930, էջ 41:

²¹ Կոլոտ Յովհաննէս Պատրիարք, Վիեննա 1904,

էջ 107, ծանոթ. 1:

Գումգափուի Տնանկաց Սեմեակին եւ Մա-
տենադարանին վրայ՝ կ'ըսէ որ հոն «Շատ մը
Ընկերութիւններ կազմուած են, 1858—
1859ին. Տանատեան, Հայկեան, Խնայողա-
կան, Լուսաւորչեան, Երեսնից, Ուսումնա-
սիրաց անուաներով»: Ինչպէս կը տեսնուի՝
Կիւլէսէրեան չէ ճշգրտաբար Ընկերութիւններու
կազմութեան ժամանակը. 1844ին եւ 1852ին
հիմնուած Ընկերութիւններ 1858—1859ին
կազմուած կը համարի՝ խառնելով զանոնք
աւելի յետագոյն ժամանակի Ընկերութիւն-
ներու հետ: Հետեւաբար կարելի չէ կրթնիլ
իր կարծիքին վրայ՝ ճշգրտաբար համար նաեւ
«Երեսնից Ընկերութեան» կազմութեան ժա-
մանակը, որուն մասին, ղեկավարաբար, ու-
րիշ կողմէ ալ լուսարանութիւն կը պակսի:

8. . . . ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1859)

Մինչեւ 1859 հայ աղջկանց վարժարանէ
զուրկ էին Գումգափու եւ Ենիքափու թա-
ղերը: Մասիս²² 1859 Նոյ. 19ին կը տեղե-
կացնէ թէ Միւնստիի Երմիաս Թերթի խմբա-
դիր Կարապետ Փանոսեանի ջանքեր եւ գոր-
ծակցութեամբ Ընկերութիւն մը կազմուել է
Գումգափուի եւ Ենիքափուի մէջտեղ աղջ-
կանց վարժարան մը բանալու համար:

Ո՛չ Մասիս եւ ոչ ալ Միւնստիի Երմիաս
յիշած է անունը այդ Ընկերութեան, որ հա-
ւանորէն 1859ի Հոկտեմբերէն առաջ հիմ-
նուած ըլլալու է: Աղջկանց վարժարանի Կա-
նոնադիրը հրատարակած են յիշեալ երկու
թերթերն ալ²³:

9. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1860)

Ըստ Ալոյսյանեանի²⁴ Գումգափու ունե-
ցած է Թատերական Ընկերութիւն մը, հիմ-
նուած 1860ին: Ընկերութիւնը Պատրիարքա-
րանէն կը խնդրէ որ Գումգափուի Լուսաւոր-
չեան աղջկանց վարժարանի սրահը իրեն
տրամադրուի՝ ներկայացում տրուելու հա-
մար, բայց կը մերժուի: Ուրիշ կողմէ տեղե-
կութիւն մը չենք գտած այս մասին:

10. ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1861)

Գումգափուի Մայր-եկեղեցւոյ վարժա-
րանի նախկին աշակերտները 1861 Յունի-
սին կը կազմեն «Սանուց Ընկերութիւն» մը՝
«բարի նպատակաւ»²⁵:

²² Թ. 408:

²³ Մասիս, անդ. Միւնստիի Երմիաս, 1859,

էջ 93:

²⁴ Գաղ. Տարեգր., Բ., էջ 82:

²⁵ Կիւլիկիա, Կ. Պ. 1861, էջ 127:

Այս «Սանուց»ն է հաւանորէն, որ 1873ին
կը կոչուէր նաեւ «Պեգեման Սանուց Ընկե-
րութիւն» եւ ունէր գրատուն մը, որուն
34 գաղղիերէն գիրք նուիրած էր Գասպար
Փրէկեան. գրատան գրադէտն էր Ա. Ա.
Մուրատեան եւ Ընկերութեան կենդրոնը
Եփեսոսի վրայ կը գտնուէր (տե՛ս Արեւելեան
Փող, Կ. Պ. 1873, Թ. 4):

Ժամանակի հոլովոյթը ի՞նչ փոփոխու-
թիւններու վերածած է Ընկերութիւնս, ո՛ր-
քան ատեն կանգուն մնացած է ան. — որո՞ւն
ծանօթ է: Նոյն հին Ընկերութեան վերա-
կազմութիւնը չէ՞ վերջին տարիներս «Պեգ-
ճեան Սանուց Միութիւն» յորջորջումով երե-
ւան ելածը, որ 1952ին իր հաւաքատեղին
նորինորոյ կը կառուցանէ, մշակութային
ձեռնարկներ կը կազմակերպէ (տե՛ս Երա-
նիկի Տարեցոյցը, 1952, էջ 12):

11. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

Ուսումնասիրաց Ընկերութիւնը կազ-
մուած է 1862 Մարտին: Պոլսոյ Զեփիւն
թերթը 1862 Օգոստ. 15ին կը գրէ. «Ասկէ
երկու ամիսի չափ առաջ մէկ քանի աղգասէր
եւ բանիրուն անձինք «Ուսումնասիրաց» ա-
նունով Ընկերութիւն մը կազմեցին, որուն
նպատակն է Ազգային դպրոցաց օգտակար
լրագիրներ արտադրելու նուիրել»²⁶: Կիւլիկիա²⁷
կը ճշգրտէ՝ Ապրիլին յիշելով զայն:

Զեփիւն կը հրատարակէ նաեւ Ընկերու-
թեան կանոնագիրը, որ 8 Յօդուած ունի:
Ընկերութեան տարեկան անդամութեան է
30 դրուշ, 10 դրուշ ալ մուտք վճարելով
(Բ.—Գ. Յօդ.): Տնօրէն Ժողովը, որ «Պա-
մակարաց Ժողով» կը կոչուի՝ 5 հոգի է կը
բաղկանայ (Ե. Յօդ.): Ընկերութեան կեն-
դրոնատեղին եղած է Մուսալլա թաղը, իսկ
առաջին Ատենապետը՝ Մարտիրոս Սալ-
թիյանեան:

Սկիզբները խոչընդոտներու կը բախի
Ընկերութիւնը, սակայն յետոյ կը բազմանան
համակիրներն ու նուիրատուութիւնները,
որով Ընկերութիւնը կարող կ'ըլլայ աղբա-
րակցողներու ճրի տրամադրել գրքեր ու
թերթեր: (Կիւլիկիա, Կ. Պ. 1863, էջ 53—56:
— Մեմուրայր Հավատիս, Կ. Պ. 1863,
Թ. 494):

²⁶ Զեփիւն, 1862, էջ 8: — Տե՛ս նաեւ վարդ Հան-
դէս Մարտիկեան, Կ. Պ. 1862, Թ. 1, էջ 4 եւ Թ. 3,

էջ 12:

²⁷ 1862, էջ 92:

12. ԵՆԱՅՐԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Ընկերութիւնս լոկ անունով կը յիշեն
Կիւլէսէրեան²⁸ եւ Թորգոմեան²⁹: Գումգա-
փուի մէջ այս անունով Ընկերութեան մը
չենք հանդիպած հայ թերթերու մէջ:

13. ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1863)

Մասիսէն (1863, Թ. 443) կ'իմանանք թէ
Գումգափու 1863ին ունեցած է «Ընթերցա-
սիրաց Ընկերութիւն» մը, որուն մասին չի
հաղորդեր սակայն մանրամասնութիւն: Ան-
ծանօթ է Ա. Ալոյսյանեանի:

14. ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1864)

Միայն Ալոյսյանեանէ (Գաղ. Տարեգր.,
Բ., էջ 86) յիշուած է Ընկերութիւնս՝ իրր
«Թաղին աղջիկներու յառաջադիմութեանը
նպատակով համար»: Զենք գտած որեւէ յի-
շատակութիւն:

15. ՀԱՅԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865)

Առեւտրական Ընկերութիւն մըն է «Հայ-
կեան»ը, որ կազմուած կ'երեւայ 1865ի ամ-
բան: Իր մասին առաջին տեղեկութիւնը հիմ-
նուէն վեց տարի վերջը, այսինքն՝ 1871ի
հայ թերթերէն կը քաղենք: Ընկերութեան
անդամներէն խումբ մը՝ 1871ին Ընկերու-
թեան Տնօրէն Ժողովի ղէմ կը բողոքէ որ
6 տարի է ի վեր որեւէ հաշիւ չէ տուած³⁰:
Ընկերութիւնս միայն անունով ծանօթ է Թոր-
գոմեանի եւ Ալոյսյանեանի:

16. ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1867)

Գումգափուի նպատամատոյց Ընկերու-
թիւնը 1867ին հաստատուած է նախաձեռնու-
թեամբ Դոկտ. Գալուստեանի, նպատակ ու-
նենալով՝ Ս. Փրէկի (Հիւանդանոցի) վար-
ժարանին տոյց գրեւորական պիտոյքը հայթայ-
թել³¹:

Ընկերութեան կենդրոնը կը գտնուէր
Լանկա բոլորած թաղը՝ Մուսալլա ճատախի
Թ. 94, ուր 1868ին «Վարդանանց»ը տօնա-
թաղուած է³²: Ընկերութիւնը ունեցած է իր
Կանոնադիրը, զոր չենք տեսած: 1868ին Տնօ-
րէն Ժողովի Ատենապետն էր Մ. Զիւմ-

²⁸ Կոլոտ Յովհ. Պատրիարք, անդ.:

²⁹ Երեմ. Զէլէպի, Բէօփրէճեան, անդ. Ա.,

էջ 244:

³⁰ Հմմտ. Մասիս, 1871, Թ. 1128: Մամուլ,

1871, Թ. 160, էջ 28, 40: — Ընկերութեան կողմէ

Գ. Եղաւորեան եւ Գեորգ Մ. Թաքալեան Ընկերու-

թեան անդամները «Հայկեան» սրճարանը կը հրաւի-

րեն՝ հաշիւները քննելու եւ Ընկերութիւնը վերակազ-

մելու համար (Մամուլ. Եփեսոս, Կ. Պ. 1871, Թ. 1707):

³¹ Մ. Ալոյսյանեան, Գաղ. Տարեգր., Բ., էջ 88:

³² Մասիս Փոքր, 1868, Թ. 114:

րիւեան, Ատենադպիրը՝ Յ. Յ. Յովակիմեան³³։

Որքան կ'երեւայ՝ Ընկերութիւնը երկարատեւ պահած է իր գոյութիւնը։ 1889ին նա 1000 զուրուշ կը նուիրէ «Դպրոցասէր Հայուն հեղինակ» Ընկերութեան՝ անոր 10 ամեայ Յորեւանին առթիւ, խոստանալով ուրիշ նպաստներ ալ³⁴։

17. ՆՈՒՆԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1871)

Հիմնուած է 1871ի սկիզբները։ «Ազգային պարտուց վնասման օժանդակութիւն մ'ընել³⁵», ահա նուիրական Ընկերութեան նպատակը։ 1871 Մայիսին նա կը վարձէ՝ Սահմանադրութեան տասնութէկերորդ տարեգարձը Հիւնիքար Իսկելիսի վայրը տոնախմբելու առաջնորդելու համար Պոլսոյ Հայութիւնը՝ շահը յատկացնելով իր նպատակին³⁶։

1871 Մայիս 30ին Ընկերութեան մէկ «Յայտարարութեան» վրայ կը տեսնուի Ընկերութեան սիրուն կնիքը հաւկթածեւ, կանանչ գոյնով. վերը նուիրական, մէջտեղը 1871 փնջածեւ զարդի մը մէջ, վարը՝ Ընկերութիւն։ Յայտարարութիւնը ստորագրած է Տնօրէն Ժողովի կողմէ՝ Գ. Մովսէսեան։

Ընկերութիւնն անձանօթ է Թորգոմեանի եւ Ալպոյաճեանի։

18. ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՌԵՆՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872?)

Ընկերութիւնն 1874ի Մարտին կը յիշուի իբրեւ «նախկին» Ընկերութիւն մը, որ Գումրի-գաւիտի մէջ զբօսարան մ'ունեցած է³⁷։ Անձանօթ է Թորգոմեանի եւ Ալպոյաճեանի։

19. ԵՂԱՅՐԱՍԻՐԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872)

1872 Յունիսին կը գրէ Պոլսոյ Փոլիշը³⁸։ «Գումրի-գաւիտ Մուսալլա Ն. 48 սրճարանը վարձելով այլեւայլ գաւառներէ մայրաքաղաքս գտնուող ազգայինք, որք խոհարարութեան եւ սպասաւորութեան գործերով կը զբաղին, Ընկերութիւն մի կազմեր են «Եղապարտաբաց» անուամբ։ Այս Ընկերութեան նպատակն է եղապարտաբաց օգնել միմեանց ի հարկին։ Խոհարարի եւ սպասաւորի պէտք ունեցողները կը հրաւիրուին յիշեալ սրճարանը։

³³ Մասիս, 1868, Թ. 837։

³⁴ Արեւելի, Կ. Պ. 1889, Թ. 1598։

³⁵ Մասիս, 1871, Թ. 1091։

³⁶ Մամուլ, 1871, էջ 350։

³⁷ Անդ, 1874, էջ 448։

³⁸ Թ. 725։

20. ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Ընկերութիւնն հիմնուած է 1879ի սկիզբը։ Մարտ 10 թուով Ընկերութեան «Առժամանակեայ Տնօրէն» Ն. Խաչատուրեան կը գրէ. «Արամեան Ընկերացարան Ընկերութիւն» մը կազմած ենք, որուն նպատակը ընտրած ենք Ենիքաւիտի եւ Գումրի-գաւիտի միացեալ թաղերուն մէջ Ընկերացարան մը հաստատել։ Ըստ կանոնադրութեան այս Ընկերութեան՝ բոլոր Հայազգի խմբագիրք, առանց բացառութեան, Ընկերութեանն պատուոյ անդամ ընտրուած են³⁹։ Ընկերութիւնը ունեցած է իր Կանոնագիրը (Լրագիր, Կ. Պ. 1879, Թ. 930)։

Ընկերութիւնն կը կոչուի նաեւ «Արամեան Գրասիրաց Ընկերութիւն»⁴⁰։

21. ՕԺԱՆԳԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԻՄՆԱԴԱՆՈՅԻ (1881)

Ալպոյաճեան կը գրէ. «Գում Գարուի Օժանդակ Ընկերութիւն (1881) անյայտ իր կեանքով եւ գործով, ինչպէս նաեւ նպատակով⁴¹։ Մասամբ կրնանք յուսարանել այս Ընկերութեան պարագան։ Նախ՝ Ընկերութեանն իսկական անունն է. «Օժանդակ Ընկերութիւն Ազգային Հիւանդանոցի»⁴²։ Երկրորդ՝ Ընկերութեանն նպատակն է Ազգ. Հիւանդանոցին նպաստել. 1882 Օգոստոսին 78 քաշ ձենովայի բրինձ գնելով՝ Հիւանդանոցի գրասենեակը կը յանձնեն⁴³։

22. ՍԱՆՈՒՀԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1884)

Մեզպուրեան աղջկանց վարժարանը 1865ին Հիւսիսային մէջ հիմնուելէ վերջ՝ 1879ին փոխադրուած էր Գումրի-գաւիտ։ Արդ, 1884ին «Սլաք» Պոլսէն կը գրէ Թիֆլիսի Նոր-Դարին. «Մեզպուրեան վարժարանի ուսումնաւարտ եւ բարձրագոյն դասու աշակերտուհիք՝ Սանուհեաց Ընկերութիւն մը կազմելով՝ մտադիր են այս տարի Հայաստանի կարօտ գիւղերէն մէկուն մէջ՝ յանուն իւրեանց բարեբար - դաստիարակին՝ Մեզպուրեան տարրական վարժարան մը հաստատելու ընդ պաշտպանութեամբ Խիզանու Ուսումնասիրաց Ընկերութեան» (Նոր-Դար, Թիֆլիս 1884, Թ. 31)։

23. ԱՂԱՍՏԱՍԻՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1886)

Կազմուած է 1886 Մայիս 1ին։ Հայրե-

³⁹ Թիֆլիսի մամուլ, Կ. Պ. 1879, Թ. 509։

⁴⁰ Անդ, Թ. 555։ — Մասիս, 1879, Թ. 2321։

⁴¹ Գաղ. Տարեգր., Գ., էջ 120։

⁴² Տե՛ս Թիֆլիսի մամուլ, 1883, Թ. 1623։

⁴³ Անդ, 1882, Թ. 1517։

նիք⁴⁴ արդէն 1886 Մայիս 10ին կը գրէ. «Մայր եկեղեցւոյ եւ միացեալ քաղից նորակազմ Աղփատախնամ Ընկերութիւնը իւր երկրորդ նիստը պիտի ընէ վաղը»։ Թերթը քիչ յետոյ կու տայ հարկ եղած բացատրութիւնը եւ կ'ընէ Ընկերութեան անունի ճշգրտումը. «Մայր-եկեղեցւոյ (Գումրի-գաւիտ), Կէտիկ Փաշայի, Ենիքաւիտի եւ Գումրի-գաւիտի զարմար թաղերու Աղփատախնամ Ընկերութեան ընդհանուր ժողով՝ ի ներկայութեան 80ի չափ անդամոց՝ իւր երկրորդ նիստն ըրաւ երէկ ի Մայր-եկեղեցի, եւ յանձնախմբի կողմէ պատրաստեալ Կանոնագրին, որ ընդամենը 30 յօդուած է կը բաղկանայ, 20 յօդուածը ինչ ինչ բարեփոխութեամբ քուէարկեց⁴⁵»։

Ընկերութեան նպատակն էր՝ «չորից քաղից աղփատ հիւանդները դարմանել⁴⁶»։ Իր առաջին նախագահն եղած է Տէր-Սուքիաս Աւագ քահանայ⁴⁷։ Ընկերութեան Դիւանը կազմուած էր հետեւեալ կերպով.

Մ. Մէլիքեան	Ա. Ատենապետ
Յ. Թօղլեան	Բ. Ատենապետ
Յ. Փալազաշեան	Ա. Ատենադպիր
Հ. Մազլըմեան	Բ. Ատենադպիր ⁴⁸

1894—1896ին Ընկերութեան Տնօրէն Խորհրդոյ անդամները 11—12 հոգի են։ Ընկերութեան ծախքով խնամուած են 1243 հիւանդներ, մեծ մասով յիշեալ չորս թաղերէն։ Ընկերութիւնը ծախսած է 45.786.75 դրուշ։ Իր եկամուտի աղբիւրներն են. Անդամաւճարներ, թատերական ներկայացումներ, «պնակներ», նուիրատուութիւններ եւ «Օժանդակ Մասնախումբ»ի մը կողմէ պտտցուած «գանձանակներ»⁴⁹։

1896ին Տնօրէն Խորհուրդը կը կազմէին.

Տէր Արսէն քահ. Տ. Յովսէփեան
Տէր Ոսկի քահ. Օհանեան
Խաչիկ Մ. Խանճեան
Կարապետ Խանճեան

⁴⁴ Կ. Պ. 1886, Թ. 2004։

⁴⁵ Անդ, Թ. 2005։ — 1885 Յունուարին Գումրի-գաւիտի բնակիչ հայ եւ յոյն քանի մ'անձեր միանալով՝ Ընկերութիւն մը կը կազմեն, նպատակ ունենալով թաղին հայ եւ յոյն վարժարաններու աղքատ աշակերտներուն նպաստել։ Ընկերութիւնը այդ նպատակով թաղին Հայ Թաղ. Խորհուրդին կը յանձնէ 3856.30 դրուշ (Մամուլի Էֆ., 1886, Թ. 5682)։

⁴⁶ Անդ, Թ. 2022։

⁴⁷ Անդ։

⁴⁸ Անդ, Թ. 2034։

⁴⁹ Տե՛ս Գանձանակ Համարատուութիւն Աղփատախնամ Ընկերութեան Գումրի-գաւիտի չորս թաղերու Կ. Պ. 1896, էջ 1—20։

Հայկ Օ. Խօճասարեան
Մեսրոպ Պէլիկեան
Պօղոս Մինասեան
Տիրան Ե. Մէլիքեան⁵⁰

Ընկերութեան մասին ընդարձակագոյն տեղեկութիւն կը պարունակէ 1899ին հրատարակուած «Տեղեկագիր»ը⁵¹։

1912ին կը կոչուի՝ «Աղփատախնամ Ընկերութիւն»⁵², իսկ 1915ին կը կազմալուծուի⁵³։

24. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1888)

Կազմուած է 1888 Յունիսին Գումրի-գաւիտի երիտասարդներէն, նպատակ ունենալով. «Պետական եւ ազգային բարձրագոյն վարժարանաց հայ ուսանողներու միութեան օգնել» (Արեւելի, 1888, Թ. 1343)։ Ունեցած է իր Կանոնագիրը։

Ընկերութիւնն անձանօթ է Ալպոյաճեանի։

25. ՀԱՅ ՅԱՌԱՋԻՄԱՍԻՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1908)

Գումրի-գաւիտի այս Ընկերութիւնը կազմուած է 1908ին եւ ունեցած է իր սեփական Ակումբը, որուն Ատենապետն էր Արմենակ Փափագեան, Գանձապետը՝ Վահրամ Ասատուրեան, Ատենադպիրը՝ Ագաբիկ Մախուսեան, Ընդհ. Քննիչ՝ Երուանդ Սարափեան եւ Արամ Գաբունեան⁵⁴։ Ընկերութիւնը 1910ին ունէր նաեւ Լսարան եւ կը սարքէր նուագահանդէս⁵⁵։

Երկուսն այս Ընկերութեան իգական անդամները 1910ին վերջերք բաժնուելով՝ նորիցանուն գտաւ Ընկերութիւն մը կը կազմեն⁵⁶։

26. ՆՊԱՐԵՂԻՆԱՆ ՇԱՀԱՅԱԿԱՆ ՀԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1908)

Պոլսոյ Ժամանակ⁵⁷ կը գրէ. «Գում-Գաւիտի մէջ հաստատուած նպարեղինաց Շահակցական Հայ Ընկերութեան առժամեայ Դիւանն կազմուած է հետեւեալ անձերէ.

Կարապետ Այճեան	Ատենապետ
Պետրոս Թաղուրեան	Ատենադպիր
Գալուստ Եկէնեան	Գանձապետ

⁵⁰ Համարատուութիւն, 1897, էջ 1։

⁵¹ Կ. Պ. 1899, էջ 1—25։

⁵² Ժամանակ, Կ. Պ. 1912, Թ. 1009։

⁵³ Գաղ. Տարեգր., Գ., էջ 122։

⁵⁴ Սուրբանդակ, Կ. Պ. 1908, Թ. 69—70։

⁵⁵ Թէոդիկ, Ամենուն Տարեցոյցը, 1911, էջ 409։

⁵⁶ Ժամանակ, 1911, Թ. 716։

⁵⁷ 1908, Թ. 57։

ուստի կը հրաւիրուին անդամները եւ անդամակցիլ փափաքողները... Գում-Գարուի Մայր վարժարանի սրահը՝ արձանագրուելու համար»:

Անդրազոյն տեղեկութիւն չունինք:

27. ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1908)

1908 Հոկտեմբերի սկիզբը կը կազմուի Միութեան եւ նոյն ամսոյն 5ին տեղի կ'ուսնայ իր Համաժողովը՝ Պատրիարքարանի մէջ: Դիւանի Ատենապետ կ'ընտրուի Գեորգ Վ. Արալանեան, Ատենապետ՝ Բարգէն Վ. Կիւլէսէրեան: Ծրագիր-Կանոնագիր պատրաստելու գործը կը յանձնուի Յանձնաժողովի մը, որուն անդամ են Յակոբոս Վ. Շախպազեան, Գնել Վ. Գալէմֆիարեան եւ Մեսրոպ Վ. Նշանեան⁵⁸:

Միութեան «Հիմնական Կանոնագրութիւն»ը իբր ձեռագիր հրատարակուած է՝ անթուական: Կը բովանդակէ 50 Յօդուած, որմէ կ'ընենք քանի մը յառաջերութիւն:

Վարդապետակ. Միութեան անդամ են Հայ Եկեղեցւոյ բոլոր Վարդապետները՝ առանց միաբանական խտրութեան (Յօդ. 1): Վարդապետական Միութեան անդամները ամսական 10 դր. պարտաւոր են վճարել Վրդպ. Միութեան անտուկին (Յօդ. 2): Վարդապետական Միութեան վարչական կազմակերպութիւնը երկու ժողով ունի. Ա. Համախումբ ժողով, Բ. Վարիչ ժողով (Յօդ. 3): Վարդապետական Միութեան նպատակն է Հայ. Եկեղեցւոյ ծառայել՝ Հայ. Եկեղեցւոյ կողմէ վարդապետներու տրուած իշխանութեան լման հասկողութեամբ (Յօդ. 9): Վարդ. Միութիւնը օգտակար կը համարի որ ընկալեալ սովորութեան համեմատ՝ իբր վարձատրութիւն տրուած ծաղկեայ եւ մանիշակագոյն փիլոններու տուչութիւնը եւ լանջախաչի շնորհումը կապուի վարդապետներու նշանակելի գործունէութեան եւ ծառայութեան պաշտօնական գնահատման հետ (Յօդ. 21):

28. ՔԱԼԱՆԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1908)

Նման «Վարդապետական Միութեան»՝ 1908ին Գումգափուի մէջ կազմուած է «Քալանաներու Միութիւն» մը, իր մասնաւոր Կանոնագրով, ինչպէս կը յիշուի⁵⁹, եւ զոր չենք կրցած տեսնել:

⁵⁸ Սուրբանդակ, 1908, Թ. 96:

⁵⁹ Սուրբանդակ, 1908, Թ. 110:

29. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1908)

Կազմուած կը թուի 1908 Սեպտեմբեր-Հոկտեմբերին: Իր Կանոնագիրը նոր կը կազմուի⁶⁰ 1908 Նոյեմբերին: Արդեօք կապ ունի⁶¹ Բերայի (Թ. 71) «Եկեղեցական Երաժշտասիրաց Միութեան» հետ: Այդ պարագային Բերայի Միութիւնը շատ աւելի հին ըլլալու է:

30. «ՏՈՐԲ» ՀԱՅ ՄԱՐՄԵԱՄԱՐԱԳԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1908)

1908ի Պոլսոյ ազատաշունչ մթնոլորտը թեւ տուած էր նաեւ Հայ երիտասարդութեան՝ թուի կատարելու համար ոչ միայն Հայաչէն մարզարաններու, այլ եւ օտար եւ միջազգային ասպարէզներու վրայ: Բազմաթիւ ու բազմազան են այն Հայ մարզական Միութիւնները, որոնք 1908էն ծնունդ առին Պոլիս եւ գաւառները: Շաւարշ Քրիսեանի Մարմնամարզ թերթը մեծ դարկ տուաւ այդ արիներու շարժումին:

Պոլսոյ «Տորբ» Հայ Մարմնամարզական Միութիւնը կազմուած է Գումգափուի մէջ 1908 Սեպտ. 20ին, նպատակ ունենալով հետեւելը. «Ամէն կերպով աշխատիլ երիտասարդութեան ֆիզիքական զարգացման»⁶¹: Այդ նպատակին հասնելու համար իր Կանոնագիրը կը սահմանէ. «Մշակել ֆուլպուլը, մարմնամարզը, աթլէթիզմը եւ սփորնները: Հաստատել մարմնամարզարան մը: Հիմնել Մատենադարան մը: Սարքել բանաստեղծութիւններ եւ կազմակերպել դաշտային հանդէսներ»⁶²:

Ընկերութեան անդամ կ'ընայ զրուիլ աւելի Հայ, ամսական 2 դահեկան վճարելով: Ընկերութիւնը ունի իր «պաշտօնական համագեցտը»: Իր վարչութիւնը կը բաղկանայ Ընդհ. եւ վարչական ժողովէ. առաջինին կը մասնակցին բոլոր անդամները, իսկ երկրորդը կը կազմուի 5 անդամէ, ընտրուած Ընդհ. ժողովէն:

Ընկերութեան Կանոնագիրը 54 Յօդուած ունի, հրատարակուած Կ. Պ. 1912ին:

31. «ՄԻՆԱՍ ԶԵՐԱՋ» ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊԱՍՏԱՆԳՈՒԹԵԱՆՑ ԱԿՈՒՄԲ (1908)

Կազմուած է 1908 Հոկտ. 1ին: Կ'աւանդէր թրքերէն, գաղղիերէն եւ առողջապահու-

⁶⁰ Անդ, Թ. 120:

⁶¹ Ընդհանուր Կանոնագիր, Կ. Պ. 1912, էջ 3:

⁶² Անդ, էջ 4:

թեան դասեր (Մանգ. Էփէտար, 1908, Թ. 2267):

32. ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (1910)

Ընկերութիւն մ'է «Բարեսիրական Ակումբ»ը, հաստատուած Գումգափու 1910 Յունուար 1ին: Իր Կանոնագիրը, հրատարակուած 1910ին, կազմուած է 42 Յօդուածէ, որուն առաջինը կ'ըսէ. «Կառավարական բարձր արտօնութեամբ կազմուած է Ընկերութիւն մը «Բարեսիրական Ակումբ» անուան տակ»⁶³:

Ընկերութիւն կազմողներն եղած են «քսան տարին լրացուցած յիսուն հիմնադիրներ» (Յօդ. 2): Ահա իր ծրագիրը. «Մայր եւ Լուսաւորչեան Ազգ. վարժարանաց աղքատիկ ուսանողներուն սատարել՝ Հայթայթիւթիւ անոնց գրեական պիտոյք եւ հանգրձնել, նաեւ անոնցմէ ուղիները զետեղել բարձրագոյն վարժարաններ» (Յօդ. 3): Անդամավճարն է ամսական 1 դր.: Վարչութիւնը կը կազմեն Հիմնադրաց ժողովը եւ Գործադիր ժողովը (Յօդ. 7 եւ 11):

33. «ԱՍՊԱՐԷՋ» ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1910)

Իր նպատակն էր. «Նպաստել իր սահմանին մէջ՝ հասարակութեան մտաւոր, բարոյական ու ֆիզիքական դաստիարակութեան»: 1920ին 190 անդամ ունէր: Վարչական խորհուրդի անդամներն էին. Կարապետ Էսմէրեան, Կ. Թուխտարեան, Մ. Մազմանեան, Յ. Սիւմեան, Յ. Գարագաշ, Կ. Բարունի, Օր. Հ. Ֆորթունաթօ, Կ. Թարխանեան, Մ. Կիւմիւշեան, Օր. Գ. Մատթեան եւ Երամ Սրապ: Միութիւնը ունէր իր ենթա-Միութիւնը՝ «Հսկայորդիներ» Գեղարուեստական Միութիւն⁶⁴:

Ընկերութեան հիմնադիրներէն կը յիշուին. Դուկա. Միքէ Գարակէօբեան, Արմենակ Շահուպ, Եգիփ Բաջուլի, Յակոբ Գաւթարեան եւ Յակոբ Գաբունեան⁶⁵: 1914ին Ընկերութիւնը կը կոչուի «Նոր Ասպարէզ» Լսարանական Միութիւն⁶⁶: 1915ին կը հիմնուի անոլոր: 1918ին կը վերակազմուի

⁶³ Կանոնագիր Բարեսիրական Ակումբի, Կ. Պ. 1910, էջ 1:

⁶⁴ Ժողովուրդի Ձայնը, 1920, Թ. 654, 847: —

Թէոդիկ, Ամէն. Տարեգ., 1921, էջ 300:

⁶⁵ Տե՛ս Նոր Հայաստան, Կ. Պ. 1919, Թ. 10,

էջ 167—168:

⁶⁶ Ժամանակ, 1914, Թ. 1793:

նոր ու ետուն գործունէութեամբ⁶⁷: 1922ին ի նպաստ իրեն հանդէս կը սարքեն⁶⁸:

34. ՅԱՌԱՋԻՄԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1910)

Ընկերութեան նպատակն է. «Զատնուսանողութիւններու օգնել»⁶⁹: 1910ին կառավարութեան կը վաւերացուի 163 թիւ պաշտօնագրով⁷⁰: Ընկերութիւնը որբուհի մը կը դաստիարակէ Ակնի Լիւի Գիւլի մէջ⁷¹:

35. «ՁԱՆԲ» ԵՆԱՅՈՂԱՍԵՐ ՄԻՈՒԹԻՒՆ (1910)

Հաւանաբար 1910ի վերջերը կազմուած է: 1911ի Փետրուարին կը գրէ Ժամանակ⁷². «Գումգափուի մէջ Զուլհան Գրիգոր Էփ. Նախագահութեան տակ հաստատուած «Ձանֆ» խնայողաւոր Ընկերութիւնը ներկայ ձմրան խստութիւնը նկատի առնելով, անցեալ կիրակի նոյն թաղին մէջ գտնուած կարօտ ընտանիքներուն բարեսիրաբար 700 քաշ անուխ բաշխած է, առանց ցեղի ու կրօնքի խտրութեան»:

1918ին կը վերակազմուի կոչուելով «Ձանֆ Միութիւն»⁷³:

36. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ (1914)

1914ին հիմնուած այս Միութիւնը զուտ մշակութային իր նկարագրով, կարճ ժամանակ մը միայն գործած է⁷⁴: Ինչպէս այս՝ նոյնպէս միւս բոլոր պոլսահայ Ընկերութիւնները առհասարակ անդամաւորուած են 1915—1918ի շրջանին:

37. «ԲԱՄԲԻՈ» ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Գումգափուի «Բամբիո» Միութիւնը կազմուած կը կարծենք 1918ի վերջը: 1919 Նոյեմբերին սկիզբը լուծուելով՝ իր անդամները կ'անդամակցին «Քնար» երաժշտասիրաց Ընկերութեան (տե՛ս Բերա, Թիւ 43): Միութիւնը իր բոլոր գոյքերը կը յանձնէ «Քնար»ին⁷⁵: «Քնար»ը երկար առեւ պահած է իր գոյութիւնը. 1918—1922 ամէն Հայ հանդէսի փայլ կու տայ իր Նուագախումբով:

⁶⁷ Անդ, 1918, Թ. 3385: — Նոր Հայաստան, անդ, էջ 167:

⁶⁸ Ժողովուրդի Ձայնը, Թ. 1001:

⁶⁹ Ժամանակ, 1911, Թ. 716:

⁷⁰ Անդ:

⁷¹ Անդ, 1910, Թ. 556: 1911, Թ. 716: — Թէոդիկ, անդ, էջ 308:

⁷² Թ. 713:

⁷³ Անդ, 1918, Թ. 3381, 3387:

⁷⁴ Անդ, 1914, Թ. 1772:

⁷⁵ Ժամանակ, 1919, Թ. 3668:

38. «ՎԱՐՈՒԺԱՆ» ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Դանիել Վարդապետի յիշատակին հիմնադրված է Միութենական նպատակ ունենալով՝ «Բարոյական, մտաւոր եւ նիւթական օժանդակութիւններ ապահովել» 1918ի թշուառներուն⁷⁶:

Միութեան Վարչութիւնը կը կազմէին⁷⁷.

Վահէ-Հայկ	Ատենապետ
Արամ Տիւզեան	Ատենադպիր
Թաթուլ Յակոբեան	Բ. Ատենապետ
Պետրոս Աբէլեան	Բ. Ատենադպիր
Մկրտիչ Արապեան	Գանձապետ
Յակոբ Դարբինեան	
Երամ Սրապ	

39. «ԿԱՅԾԱԿ» ՇԱՀԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

1919ի սկիզբը կազմուած է այս Միութիւնը եւ իր անդամական հաւաքոյթները տեղի կ'ունենային Մայր-Վարժարանին մէջ⁷⁸:

40. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Գումգափուի «Արեւելեան Թատերական Միութեան» հիմնումի մասին չենք հանդիպիր տեղ մը: Կը յիշուի 1920ի Յունուարին⁷⁹, որով կարելի է ենթադրել թէ անոր կազմութիւնը եղած ըլլայ 1919ին: 1920 Յունուար 7ին հանդէս կը սարքէ Գումգափուի Յունաց Ներտիւլէյի եկեղեցւոյ թատերասրահը, ուր տեղի կ'ունենան բանախօսութիւն, նուազ եւ կատակերգութիւն⁸⁰: 1920 Փետրուարին «Հայ Բանակի Օր»ունան առթիւ, Միութեան թատերախումբը կը ներկայացնէ «Մեծն Վարդան Մամիկոնեան»⁸¹: Նոյն տարի Մայիսին՝ Միութիւնը ամառնային ներկայացումներու ծանուցում կու տայ՝ ի հաշիւ Միութիւններու կամ բարերարական նպատակներու⁸²:

41. ՀԱՅ ՀԱՐՏԱՐԱՐԳԵՏՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Հիմնուած է 1919ի ամառը: Հիմնադիր Ժողովը 1919 Յունիս 11ին կ'ընտրէ Վարչական Ժողով մը՝ հետեւեալ մասնազէտներէ. Կ. Պեկեան, Ունճեան, Պասաճեան, Գաւաֆեան, Թ. Թաղաբեան, Վրթանէսեան, Սէրէնկիւլեան, Քէրէստէճեան, Նուրիճեան, Գարակէօգեան, Ալթունեան եւ Ստեփանեան:

⁷⁶ Անդ, 1918, Թ. 3382:

⁷⁷ Անդ, Թ. 3399:

⁷⁸ Անդ, 1919, Թ. 3404:

⁷⁹ Անդ, 1920, Թ. 3730:

⁸⁰ Ժամանակ, 1920, Թ. 3730:

⁸¹ Անդ, Թ. 3755:

⁸² Անդ, Թ. 3827:

Միութեան հաւաքավայրը Ղալաթիոյ Խորհրդարանն էր⁸³:

Այս Միութեան նպատակներէն մին եղած է մտաւորական ոյժ տրամադրել Երեւանի Կառավարութեան⁸⁴:

42. ԴՊՐՈՑԱՍԵՐԻ ՇՐՋԱՆԱԽԱՐՏԻՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

«Դպրոցատէր Հայուհեաց Ընկերութեան» Գումգափուի վարժուհիները չըմանաւորուողները 1919 Մայիսին կը կազմեն «Դպրոցատէրի Շրջանաւարտից Միութիւն»ը, նպատակ ունենալով նպաստել իրենց վարժարանին: Միութիւնը 1919 Յունիսին նուազահանդէս կու տայ՝ ի նպաստ վարժուհիներին⁸⁵: 1920 Փետրուարին հանդէս կը սարքէ՝ ի նպաստ որբերուն⁸⁶:

43. «ՏՐԱՄԱԹԻՔ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1922)

1922 Սեպտ. 1ին «Նորակազմ» է Գումգափուի «Տրամաթիք»ը, կազմուած՝ տեղւոյն «Երիտասարդ ամաթէօներէն» եւ որ պատրաստ է ազգ. բարենպաստ հաստատութիւններու տրամադրել իր ուժերը: Խումբին գլուխը կը գտնուի Ա. Գալէքեան⁸⁷:

Հ. Ե. ՊՈՂՈՍԵԱՆ

ԹԵՐԱԿԱՆ ՄԵՍՐՈՊ ՎՐԴ., Յակոբ Դ. Զուլայեցի (1655—1680), Պէյրութ, տպարան Ֆօք-Քրէս, 1956, էջ 8 + 268:

Էջմիածնի նշանաւոր հայրապետներէն է Յակոբ Դ. Զուլայեցի Կաթողիկոսը, որ քառորդ դար խոհեմութեամբ եւ կորովով վարած է հայ Եկեղեցւոյ ղեկը: Ուստի կ'արժէր մենագրութիւն մը նուիրել անոր կեանքին ու դործին վրայ եւ ահա առաջիկայ հատորով այդ ըրած է Գեղ. Մեսրոպ Վ. Թերզեան, որ կրնայ վստահ ըլլալ թէ՝ «Անոր կաթողիկոսական երկար շրջանը ըստ բաւականի ներկայացուցած է անաչառ հոգւով» (անդ, էջ 5): Եւ այս անաչառութիւնը միացած բժանդրութեան՝ կու տան զբքին գնահատելի արժէք:

Ներածութեան մէջ (էջ 7—16) կը գծուի քաղաքական եւ եկեղեցական վիճակը հայ աշխարհին, որուն մէջ եւ որուն համար Յակոբ Զուլայեցի աշխատած է: Ապա տասը

⁸³ Ժամանակ, 1919, Թ. 3566, 3571: — Թէոդիկ, Ամէն. Տաբեց. 1921, էջ 308:

⁸⁴ Անդ, Թ. 3656:

⁸⁵ Անդ, Թ. 3535:

⁸⁶ Անդ, Թ. 3745: — Հիմն. Ժողովուրդի Ձայնը, 1921, Տ. 853:

⁸⁷ Ժողովուրդի Ձայնը, 1922, Թ. 1188:

գլուխներու նիւթ կը կազմեն (Գլ. Ա., էջ 17—34) Յակոբ Դ. Զուլայեցի շինարար Կաթողիկոս, (Գլ. Բ., էջ 35—51) Հայ տպագրական արուեստը Յակոբ Կաթողիկոսի օրով, (Գլ. Գ., էջ 59—62) Կ. Պոլսոյ խնդիրներ, (Գլ. Դ., էջ 63—73) Աղթամար, Նոր-Զուլա, Սանահին, Գանձասար, (Գլ. Ե., էջ 74—102) Եղիազար հակաթու Կաթողիկոս, (Գլ. Զ., էջ 103—115) Տնտեսական տագնապ եւ յարակից դէպքեր, (Գլ. Է., էջ 116—130) Յակոբ Կաթողիկոսին դաւանանքը, (Գլ. Ը., էջ 131—169) Յակոբ Զուլայեցի եւ Լեւհահայերը, (Գլ. Թ., էջ 170—189) Յակոբ Զուլայեցի եւ ազատագրական շարժումը, (Գլ. Ժ., էջ 190—211) Յակոբ Զուլայեցիի վերջին դաւանդիրը եւ մահը: Վերջաբանին մէջ (էջ 212—215) կ'ամփոփուին նախորդ գլուխներու բովանդակութիւնները շեշտելով որ «Յետագայ պատմագիրները զինքը (Յակ. Կաթ.) կը դասեն ի շարս մեծագոյն կաթողիկոսներու: Հայութիւնը անոր մէջը կը տեսնէ ռազմիկայ մը ազգային ազատագրումին: Եկեղեցին զայն կը դրուատէ իրեն նախանշանը եւ անձնուէր դիտապետ» (էջ 215):

Անոր կը յաջորդը Յաւելուած մը (էջ 216—238), ուր կը հրատարակուին Նորայր եպ. Պողոսեան Սրբազանի Մայր Յուցակ Զեռագրաց Ս. Յակոբեանց Բ. հատորէն այն կտորները, որոնք Յակոբ Կաթողիկոսին կը հային եւ այս հատորին մէջ պէտք էին ազուցուիլ:

Իրեն թերութիւն չէ կարելի նշել, բայց լաւ կ'ըլլար, եթէ Գեղ. Վարդապետը նկատի առած ըլլար նմանապէս ժամանակակից Յիշատակագրութիւնները, որոնցմէ երկու հատ կը բաղձամ յառաջ բերել, զի Զուլայեցի հայրապետին գործունէութիւնը հարազատորէն եւ հակիրճ կը պատկերացնեն: Մալտի-րոս գրիչը 1657ին կը գրէ. «Ի հայրապետութեան Հայոց քաջ լարունապետի Տեառն Յակոբ Կաթողիկոսի, որ յայտ ժամանակի նորոգեաց գտնուի էջմիածինն եւ այլ բազում եկեղեցիս շինեաց եւ գթամատունս նորոգեաց, զկարգս եւ զհաւատս հաստատեաց եւ ուղղեաց ի կարգ եւ զկանոն առաջի սուրբ հայրապետացն, որ յայտ ժամանակի ճառագայթեալ փայլի ի մէջ հաւատացելոց որպէս զարեգակն ի մէջ զիշօրէի ամբարն եւ լուսինն Լրացեալ ի մէջ զիշօրի աշնան» (Սարգիսեան Հ. Բ., Մայր Յուց., Ա., էջ 197): Իսկ 1666ին զրուած Ժողովածոյի մը մէջ կայ յԱւարտե-

ցաւ... ի վերադիտողութեան հայկազեան սեռի Տեառն Յակոբայ Զուլայեցի սրբազան կաթողիկոսի: Եւ Հայրապետ Սր. էջմիածնայ էր ի ժամանակիս յայտիկ ի քաղաքի աստ նստեալ վասն նորազանգ կատարելուն Եղիազար եկեալ էր աստ (Կ. Պոլիս) եւ աստի գնացեալ Անդրիանուպօլիս առ Թագաւորն Սուլթան Մէհմէտէտ եւ եղ արգուհալ: Աստուածն Աստուծոց եւ Տէրն տէրանց քաղցրացոյց զսիրտս Թագաւորին...: Այս Թագաւորս Սուլթան Մէհմէտէտ այլ ետ իւր ձեռքն հաթի շէրիֆ ի ձեռն Յակոբ Կաթողիկոսին, թէ որպէս յառաջն էր ամենայն հայք եւ ամենայն իշխանութիւն Հայոց ի սուրբ էջմիածնայ նստող կաթողիկոսին ձեռքն եղեալ էր այսուհետեւ այլ նոյնպէս եղիցի եւ տասնուհինկ Ռ. ըստակն որ Եղիազարն մերի էր կապեր զայն այլ Թագաւորն անցաւ եւ ի մէջ հաթի շէրիֆին գրեաց Նալաթլամէ (Պողոսեան, Մայր Յուց., Գ., էջ 229):

Այս ալ յաւելում: Մեր Միաբանութեան Ընդհ. Արքահայրը Գեղ. Արհ. Հ. Մեսրոպ Արքեպ. Հապոյեան իր 21 Փետր. 1957 թուակիր նամակով կը գրէ՝ «Այս օրերս մեզի բերին Զեռագիր մը ի վաճառումն. պահանջուած զինք... գրքին արժէքն շատ վեր էր, անցուցի աչքէ... հանդիպեցայ ոտանաւորի մը նուիրուած Յակոբ Զուլայեցւոյ... տնակապետը կու տան Յակոբ Կաթողիկոսին ծառայ Միտաս. սկիզբը՝ Յակոբ Հայոց Կաթողիկոս Մեծ Պատրիարք էջմիածնին վերջը՝ Սիրտ իմ առ քեզ աղաղակէ եւ թողութիւն ի քէն խնդրէ, դու ողորմեա եւ ինայէ, եւ թողութիւն մեզ շնորհէ»:

Գեղ. Թերզեան Վարդապետի այս երկը թէեւ սպառիչ չէ, աւելայն անվարան կարելի է յաջող ու գովելի համարել: Անոր վարկածները հաստատուն ապացոյցներու վրայ յեցած են: Օգտուած է հայ եւ օտար ազգայիններէ, բայց մանաւանդ Վատիկանի դիւանին մէջ պահուած անտիպ վաւերագիրներէ (Թուղթերէն) որոնցմէ քանի մը հատ լոյս ընծայած է եւ այսպէս իր աշխատասիրութիւնը նորութիւններով օժտած — նաեւ լատիներէն ընագրէ թուղթեր հայերէնի թարգմանած է: Յանկալի է՝ իր գրիչէն տեսնել զեռ ուրիշ բոլր ու հետաքրքրական ուսումնասիրութիւններ, որոնք լոյս ու շող արձակեն մեր եկեղեցական պատմութեան մութ անկիւններուն վրայ:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ